



**2014** PUBLIC EXAMINATION

# **Armenian**

## **Continuers Level**

**Section 1: Listening and Responding**

## **Transcript**

## Section 1, Part A

### Text 1

*Սիրելի՛ աշակերտներ եւ ուսուցիչներ,*

*Ներեցէ՛ք այս խանգարումը եւ ուշադրութեամբ մտիկ ըրէ՛ք հետեւեալ յայտարարութեան: Հպարտութեամբ կը տեղեկացնեմ, թէ մեր դպրոցէն կարգ մը աշակերտներ յաջողութեամբ հասան “Young and Fresh Dance Festival”-ի եզրափակիչ փուլին, որը տեղի պիտի ունենայ յաջորդ շաբաթ:*

*Այս աշակերտները տքնաջան աշխատանք թափեցին իրենց պարերը բեմադրելու եւ ներկայացնելու մրցանակի առաջին փուլին: Յաղթական ներկայացող աշակերտներն են՝ 7-րդ կարգէն Լենան եւ Հայկը, 9-րդ կարգէն՝ Նորան եւ 11-կարգէն՝ Սեւանը: Դժբախտաբար Հայկը վնասուեցաւ պարելու պահուն եւ պիտի չի կրնայ իր մասանկցութիւնը բերել եզրափակիչին: Այս կը նշանակէ, որ ամբողջ պարը պէտք է փոխուի մէկ շաբաթուայ ընթացքին:*

*Հաճեցէ՛ք ներկայ գտնուիլ ու քաջալերել մեր տաղանդաւոր մրցակիցները: Տոմսերը անվճար են, բայց տեղերը՝ սահմանափակ: Ուրեմն, անունդ արձանագրէ՛ դպրոցի գրասենեակին մինչեւ երեքշաբթի առաւօտ ժամը 9:00-ը: Եթէ յատկացուած տեղերէն աւելի անուններ ներկայացուն, ստիպուած գլխարկէն անուններ պիտի զատենք:*

## Text 2

Հաղորդավար:

“Scientific Talents” հաղորդաշարի ունկնդիրներ, այսօր մեր գրույցակիցն է շատ երիտասարդ գիտնական Մարի Հայկազունը: Նա մրցանակ է ստացել աչքի վերաբերեալ հետազոտութեան համար: Յիանալի է, որ կան նման ծրագրեր, որոնք քաջալերում են մեր երիտասարդ գիտնականներին: Մարի՛, բացատրի՛ր քո սերը գիտութեան հանդէպ:

Մարի:

Իմ ընտանիքում եղած են շատ բժիշկներ եւ գիտնականներ, որոնք ամէն ընտանեկան հաւաքոյթի գրույցում էին գիտական վերջին նորութիւնների մասին: Այսպիսով իմ մէջ արթնացած է մեծ հետաքրքրութիւն եւ սէր գիտութեան նկատմամբ:

Հաղորդավար:

Բացառիկ է, որ այսպիսի քաջալերական ծրագրերը նիւթապէս վարձատրում են ու մղում քեզ, որ շարունակես քո աշխատանքը:

Մարի:

Ես պէտք է ասեմ, որ յաղթող ճանաչուելը հզոր զգացողութիւն է, եւ ես արժանի եմ դրան: Կասկած չկայ, որ մեծ յաջողութիւն կ'ունենամ այս ճիւղում: Սրանից յետոյ ինձանից սպասէ՛ք աւելի մեծ յաղթանակներ ու գիւտեր:

Հաղորդավար:

Եւ վերջում, ես դիմում եմ մեր երիտասարդ ունկնդիրներին, որ նրանք հետաքրքրուեն գիտութեամբ եւ աջակցեն այսպիսի ծրագրերին, քանի որ դրանից կը շահի մեր երկիրն ու ողջ մարդկութիւնը: Շնորհակալութիւն, Մարի:

### Text 3

- Նորա:** Արա՛, լսէ՛: Շրջանի բոլոր բնակիչները հրաւիրուած են ժողովի մը, որպէսզի նային եւ տեղեկութիւն ստանան նոր առեւտուրի կեդրոնի ծրագրին մասին:
- Արա:** Գիտեմ: Թերթին մէջ կարդացի: Անպայման ներկայ պիտի գտնուիմ, որով չառ բեկիքներ ունիմ:
- Նորա:** Այս ծրագրին գէ՞մ ես:
- Արա:** Կը սիրեմ մեր շրջանի խաղաղութիւնն ու պարզութիւնը: Հոս բոլորս իրար կը ճանչնանք եւ համերաշխ կեանք մը կ'ապրինք: Զիչտ այս պատճառով երեխաները կրնան դուրսը խաղալ իրարու հետ՝ հեռու արկածներէ եւ օտարներու վտանգէն: Այս բոլորը պիտի կորսնցնենք, եթէ այս կեդրոնը կառուցուի:
- Նորա:** Բայց, մտածէ թէ որքա՞ն դիւրութիւններ պիտի ստեղծուին: Շուկան եւ ամէն տեսակի զբաղմունքները եւ սրճարանները որքա՞ն մօտ պիտի ըլլան քեզի:
- Արա:** Շատ ուրախ չեմ այս աղմուկի, չինարարութեան, անպէտք եռուղեռի, կլիմայի պղծումի եւ բնութեան ոչնչացման ծրագրով: Չմոռնանք նաեւ, որ խայտառակ մէկ կառուցուածքով ամբողջ շրջանի տեսքը պիտի փոխեն:
- Նորա:** Փոփոխութիւնը անխուսափելի է: Պէտք է թափ պահել, այլապէս մեր տնտեսութիւնը կը տկարանայ ու իբր ազգ ետ կ'երթանք: Առաւելաբար, մէկ առեւտրական կեդրոնի կառուցումով բնութիւնը չի տուժեր:

## Section 1, Part B

### Text 4

**Հաղորդավար:** Յարգելի՛ ունկնդիրներ, այսօր մեր հաղորդման հիւրն է Սօսի Մելքոնեանը՝ որ պիտի խօսի աղքատութեան հարցի մասին: Սօսի՛, ի՞նչը մղեց քեզ ուսումնասիրելու այս խնդիրը:

**Սօսի:** Այսօր չափ երեխաներ, ապրում են աղքատութեան մէջ: Կարիքը կար լուրջ մօտեցում ցուցաբերելու այս խնդրին: Աղքատութիւնը ունի մեծ ազդեցութիւն երեխայի մարմնական զարգացման եւ հոգեբանութեան վրայ: Դա առաջացնում է հոգեկան խնդիրներ: Օրինակ՝ ես միշտ յիշում եմ, թէ որքա՜ն վատ էի զգում, երբ չունէի որոշ խաղալիքներ եւ հագուստներ:

**Հաղորդավար:** Կը պատմե՞ս մի քիչ քո ներկայ աշխատանքի մասին:

**Սօսի:** Ես ստեղծել եմ կազմակերպութիւն՝ «Առողջ եւ ուրախ մանուկ» անունով, որի նպատակն է օգնել աղքատ ընտանիքներին՝ նրանց ապահովել բնակարանով, ուտելիքով, եւ այլ իրերով, որովհետեւ, եթէ աղքատ ընտանիքների քանակը մեծանայ, մենք կ'ունենանք բազմաթիւ հիւանդ երեխաներ:

**Հաղորդավար:** Ի՞նչպէս պիտի իրականացնէք ձեր նպատակը:

**Սօսի:** Մեր կազմակերպութիւնը առիթ է տալիս շատերին համախմբուելու եւ օգնելու աղքատ ընտանիքներին: Չէ՞ որ «Չուրը կաթիլ-կաթիլ հաւաքելով՝ լիճ կը սարքենք»: Ուրեմն, բոլորից ընդունում ենք նիւթական եւ բարոյական օգնութիւն, որպէսզի միասնաբար կարողանանք բարելաւել աղքատ ընտանիքների վիճակը եւ ազատենք չափ երեխաների աղքատութեան վատ հետեւանքներից:

## Text 5

- Հայր: Լիլիթ, սիրելիս: Չե՞ս կարծեր, որ աշխարհին չորս կողմը մինակդ ճամբորդելը քիչ մը վտանգաւոր կրնայ ըլլալ:
- Լիլիթ: Հայրիկ, աշխարհի խաղաղ երկիրներէն մի քանին պիտի այցելեմ: Ի՞նչու կը մտահոգուիս: Ես արդէն ամէն օր պիտի հեռաձայնեմ ու խօսիմ ձեր հետ:
- Հայր: Հեռաձայնով կապ պահելն ու քովդ ըլլալը նոյն բաները չեն: Խնդրեմ, հասկցի՛ր իմ տեսակէտս: Այս նիւթի շուրջ խօսելէն ձանձրացայ արդէն:
- Լիլիթ: Աշխարհի չորս կողմը բարեկամներ եւ ընկերներ ունիմ: Կ'ուզեմ անոնց հետ մօտ յարաբերութիւն ստեղծել: Չե՞ որ դուն ինծի սորվեցուցիր, թէ որքան բարեկամ ունենամ, այդքան հարուստ եմ: Առաւելաբար, մինակ ճամբորդելը ինծի շատ աւելի ուժեղ եւ հասուն անձ մը պիտի դարձնէ:
- Հայր: Եթէ աւելի անկախ եւ ուժեղ ըլլաս, կրնաս այս երկուքին մասին գիրք մը գրել: Այսպիսով կ'ըլլաս հասուն եւ հարուստ:
- Լիլիթ: Հայրիկ, ես արդէն որոշած եմ եւ պիտի մինակս ճամբորդեմ, դուն ուզես կամ չուզես:
- Հայր. Ալ կը բաւէ՛, Լիլիթ, շուտ սենեակդ գնա՛: Այս մօտեցումը քեզմէ չէի՛ սպասէր: Շա՛տ համարձակ եւ ինչո՞ւ չէ, անբաղաքաւար ձեւով կը խօսիս:

## Text 6

**Օրդ Սարգիսեան:** Արմէն, ի՞նչ խնդիրով ես եկել ինձ մօտ այսօր:

**Արմէն:** Օրդ Սարգիսեան, ես մտածում եմ, թէ ինչ ճիւղ ընտրեմ համալսարանում՝ զպրօցը աւարտելուց յետոյ: Կարծում եմ, կան՝ բժշկութիւն, կան՝ էլ երկրաչափութիւն ընտրեմ:

**Օրդ Սարգիսեան:** Արմէն, դու լաւ ես ե՛լ թուաբանութիւնից, ե՛լ բնագիտութիւնից, որոնք երկու ճիւղերի համար էլ հիմնական առարկաներ են: Սակայն, դու աւելի չատ ձեռքբերումներ ունես երկրաչափական ճիւղի մէջ, ինչպէս օրինակ՝ «Երկրասարդ երկրաչափ» մրցոյթի յաղթող ես ճանաչուել: Բացի այդ, քո հայրը երկրաչափ է: Նա կարող է օգնել քեզ քո դասերի մէջ եւ նոյնիսկ կ'օգնի լաւ գործ գտնելու հարցում:

**Արմէն:** Այո՛, հօրս երազանքն է, որ ես էլ իր նման երկրաչափ դառնամ: Իսկ իմ մայրն էլ բժիշկ է, եւ նա էլ ինձ կ'օգնի, եթէ ես ընտրեմ բժշկութիւնը: Ես սիրում եմ մարդկանց բուժելու գաղափարը:

**Օրդ Սարգիսեան:** Գուցէ, արժէ մտածել, թէ ի՞նչքան պէտք է սովորես:

**Արմէն:** Բժշկութիւնը երկար տարիների ուսում է պահանջում: Մինչդեռ երկրաչափութիւնը աւելի կարճ կը տեւի ու ես ուզում եմ շուտով աշխատանքի սկսել: Շնորհակալ եմ, օրիո՛րդ Սարգիսեան: Կարծում եմ, որ կողմնորոշուել եմ արդէն: